Կոյրը միշտ վաղումէ տղմի,
Նրան լոյս ղամպարն ի՞նչ անէ։
Խլին թէ լաւ ասես թէ վատ
Իրան կը կարծէ համեմատ,
Սևին սապոն՝ խևին խրատ
Ծռին գաղափարն ի՞նչ անէ։
Թանը լաւ է միշտ սովորին
Քանց բաժակը թագաւորին.
Շքից վախեցող զինուորին
Հրացան ասպարն ի՞նչ անէ։
Նեղ տեղից չի գնայ լայնը,
Բան չը հասկացող ունայնը.
Երբ մի մարդ չը լսի ձայնը,
Խեղճ քնարահարն ի՞նչ անէ։
Նայումէ Ջիւանը այտին
Շքեղակերպ նաշխուն խայտին.
Անպիտան և ոստոտ փայտին
Հիւանի սուր տապարն ի՞նչ անէ

Գ.

Գիտունի հետ քար քաշելն հեշտէ խիստ,
Տգէտի հետ մեղը ուտելն դժուար է.
Գիտունը կ'ճարէ վերջն իրան հանգիստ,
Բայց տգետը նորէն էլի յիմար է։
Ո՞վ կասէ բնական իմաստուն ծնայ,
Ուսում չը գիտցողը անկիրթ կը մնայ.
Երբ որ ցեխը տեսնի անշուշտ կը մնայ
Խոզի վիզը հարիւր մարգարիտ շարէ։
Գիտութիւնը մէկ արև է անխաւար,
Ծովից ոտքով կերթայ առանց նաւավար.
Բայց տգէտը չունի ուղիղ գաղափար,
Որովհետև հոգւոյ աչքը խաւար է։
Ջիւան գտիր դու գիտութեան գումարը,
Ցառաջադէմ է լեզուագէտ ճարտարը.
Թէ կուզես որոնէ ամբողջ աշխարհը՝
Իմաստունի մօտ տգէտը տկար է։

Դ.

Գիտունը տգէտի բանից չի ցաւի՝
Խելագարի գործը հաշիւ չի լինի.
Սիրահարը սիրականից չի ցաւի՝
Սիրոյ ասպարէզը կռիւ չի լինի։
Գիտութեան ճրագը յարաժամ վառ է,
Տգիտութեան վերջը մահ կը պատճառէ.
Անդամանդը հասկացողին վաճառէ,
Տգէտներու մօտը պատիւ չի լինի։
Մարդուս սրտով սիրական է հարկաւոր,
Բարեկամը սեպհական է հարկաւոր.
Պայազատը սեպհական է հարկաւոր.
Ցիմարը կարդալով ազնիւ չի լինի։
Ջիւանը գիտութեան սրտով կարօտն է,
Բայց ի՞նչ օգուտ ժամանակը աղօտն է,
Ձայնը՝ կերպարանքը՝ քայլքը իւր մօտն է,
Ագռաւը գովուելով արժիւ չի լինի։

Ե.

Տասը տարուց մինչև քսան և եօթը
Հասայ եօթանասուն թուականին մէջ.
Ժամ ուրախ ժամ տխուր ինչպէս որ օդը՝
Սիրտս տարակուսած իր շրջանին մէջ։
Իմ հայրենեաց սիրոյն կարօտ և անտես
Վարդի նման թառամել է իմ երես՝
Կոյր բաղդիցս ազատութիւն չունիմ ես
. . . տատանիմ Հայաստանին մէջ։
Ինձ վերայ կայ այլոց սուր սուսերները,
Ցերեկը կը տանջուին և գիշերները՝
Նոյն գունակ ես և իմ Հայ ընկերները
Ինչպէս Նոյ ընտանեօք իւր տապանին մէջ։
Ջիւանս իմ սրտիս բաղձանքներովը
Կապուած եմ ցանկութեան վտանգներովը.
Անիրաւ աշխարհի տանջանքներովը
Կենդանի կը ննջեմ գերեզմանիս մէջ։

(Մ՝-ց-ր-դ՝ է յ-ջ-ր-դ -մ-ֆ-ֆ։)

ՇՈՒՐՋԱՌ

Տփխիսայ Հայոց Եկեղեցեաց Պ. Երեսփոխանք ոմանք յարդեանց Եկեղեցեաց մի ոսկեթել դիպակեայ Շուրջառ ընծայեցին ի յիշատակի Մայր Աթոռս Ս. Էջմիածնի և ի վայելուչն Վեհ. Կաթողիկոսի։